



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Ա. ՄԱԶՄԱՆՅԱՆ



«17 06 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0105-21

Ձեռնարկողը՝

Կարեն Գասպարյան

ք.Երևան, Գ.Հարությունյան փողոց 11 գրուն

**Գործունեությունը՝ Կողայքի մարզի, Ծաղկաձոր քաղաքի Վ.Հարությունյան
փողոց, 2/10 հասցեում նախադեսվող
բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

Կողայքի մարզ, ք. Ծաղկաձոր, Վ. Հարությունյան փողոց 2/10

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
սնորենի պարտականությունները կատարող՝

Խ. Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ բՓ
17 06 2021թ. 0105-21

Կորայքի մարզի, Ծաղկաձոր քաղաքի Վ.Հարությունյան փողոց, 2/10
հասցեում նախադեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայք

| | |
|-------------------|---|
| Ձեռնարկող՝ | Կարեն Գասպարյան |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ |
| Գործունեությունը՝ | «Գ» կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր, Վ. Հարությունյան փողոց 2/10 |

ՆԵՐԱԺԱԿԱՆ ՄԱՍ Գործունեության նպատակն է Կոտայքի մարզի, Ծաղկաձոր քաղաքի Վ.Հարությունյան փողոցի, 2/10 հասցեում կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ բնակելի համայիր: Համայիրի կառուցման նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատով հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 03022021-07-0119 վկայականը, Ծաղկաձորի համայնքապետի կողմից տրված 10.02.2021թ. N 02 ճարտարապետահատակագծային առաջդրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման համար, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 13754 քմ, որից կառուցապատման տարածքը՝ 4990,47 քմ (36,28%), անջրանցիկ տարածքը՝ 1378,12 քմ (10,01%), կանաչպատման տարածքը՝ 7385,41 քմ (53,69%):

Նախատեսված բնակարանների ընդհանուր քանակը կազմում է 176 բն., ավտոկայանատեղի (ստորգետնյա և վերգետնյա)⁷⁴ 74 ավտոմեքենա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի միջնամասից դեպի հարավ-արևելք տարածվող Ծաղկունյաց լեռների թեղենիս լեռան արևելյան լանջին՝ հարավից հյուսիս 12° անկումով, որտեղ ուժին բացարձակ նիշերը տատանվում են 1806÷1788 մետրերի սահմաններում:

Ծաղկաձոր քաղաքը տեղակայված է Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիս-արևելյան ճյուղավորման Թեղենիս լեռան (2846մ) արևելյան լանջին և ընդգրկում է Տանձաղբյուր գետի ավազանը (ծովի մակերևույթից 1830÷2000մ բարձրության վրա): Ունի քառակողման ձևաչափ, բարդ է, հորիզոնական մասնատվածության խտությունը կազմում է 1.2 կմ/կմ²: Հովտաձորակային ցանցի խտությունը 3.0 հատ/ կմ² է: Մակերևույթի թեքության անկյունը կազմում է 45-52°:

Նկարագրական մասՀամալիրը տեղակայվել է Կեչառիսի վանական համալիրի
մոտակայքում, 214 մ հեռավորության վրա:



Տեղանք ունի բարդ ռելիեֆ, ինչը պարտադրում է շինուազների տերասաձեվ դասավորությունը տեղանքում:

Առաջարկվել է երեք տերասածեվ դասավորված մասնաշենք, իսկ գետակի մոտակայքում, որտեղ ունի հարթ ավելի հարթ է, դասավորվել են քոթեզային կառուցները:

Համալիրի տեղաբաշխման վայրի ընտրությունը, Կեչառիսի վանական համալիրի հարեվանությամբ, ճոպանուղուն համեմատաբար մոտ լինելը, նպատակ ունի մարդկանց ներգրավել տուրիստական և տնտեսական ակտիվ հանգստի մեջ:

Համալիրը բացի բնակչոնդից հագեցած է մարդկանց ժամանցը և հանգստը կազմակերպող ծառայություններով՝ լողավազան (նաև բաց լողավազան), ֆիթնես դահլիճ, ուստորանային և սրճարանային տարածքներ, կանաչապատ տարածքներ:

Համալիրը բաղկացած է երեք մասնաշենքերց (A, B, C) և ուրեմն երկիրկանի տիպային քոթեզներից:

Ա-մասնաշենքը ունի բնակելի հինգ վերգետնյա և մեկ ստորգետնյա ավտոկայանատեղերով հարկ (63 բն.):

Բ-մասնաշենքը ինը հարկանի բնակելի շենք է (101թն.):

С-մասնաշենքը կազմված է բնակելի, հասարակական հանգստի և սպասարկման ոլորտի տարածքներից, 4 հարկ (12 բն.):

Ա և B մասնաշենքերը ռեիֆային առանձնահատկությունից ելնելով ունեն տարբեր հատակագծային նիշեր եվ իրար են միանում C-մասնաշենքով:

0,00 նիշում հասարակական սենքերում և -3,30 նիշի ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկերի առաստաղների տակ:

Ավտոկայանատեղիում օդի արտածումը կատարվում է երկու գոտուց հավասար օդաքանակով, իսկ ներածումը իրականացվում է մարդկանց անզաւերթում վերևի գոտուց:

Հասարակական սենքերի օդափոխության ներածման համակարգերում օդի տաքացումը էլեկտրական է, իսկ հովազումը՝ արտաքին բլոկի միջոցով:

Օդափոխության սարքերի աղմուկի նվազեցման համար նախատեսված են ձայնախլազուցիչներ:

Հասարակական սենյերի օդակունության համակարգերը ցերմամեկուսացվում են:

Շենքի ընակելի մասից և պատուկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմիարման համակարգեր:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռականենտորնական վահանակից:

Համայիրի ջերմամատակարարման համար կաթսայատուն չի նախատեսվում: Զեռուցումը իրականացվելու է յուրաքանչյուր բնակարանի համար 24 կՎտ հզրությանք գազով աշխատող օրատարարապության կաթսանեռով, ինչպես նաև Էլեկտրոնական հոսանքով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացնելու է ըստ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից 14.09.2020թ. տրված ԱՄ 3/51 տեխնիկական պայմանի, համաձայն որի՝ ջրամատակարարումը կիրականացվի տարածքից մոտ 20 մ հեռավորությամբ անցնող ջրագծից ($d=110$ մմ), ջրահեռացումը կիրականացվի միանալով՝ տարածքից մոտ 15 մ հեռավորությամբ անցնող կոլուդագծին ($d=250$ մմ).

Բազմաֆունկցիոնալ բնակելի համայնքի Էլեկտրամատակարարումը իրականացվելու համաձայն «ՀԵՅ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Համայիրի գաղամատակարարումը իրականացվելու է համաձայն «ԳազպրոՄ Արմենիա» ՓԲԸ կողմից 28.07.2020թ. տրված N 01-09/1233 գրության, 657.6 մ/խ ժամայիրն ծախսով



հնարավոր է նախատեսել d=219մմ միջին ճնշման վերգետնյա գազատարից, որը գտնվում է նշված հողամասից 100մ հեռավորության վրա:

Զրամատակարարման արտաքին համակարգը նախատեսված է իրականացնել պոլիէթիլենե 110x4,2 մմ, և պողպատե էլեկտրաեռակցվող 108x4,0 մմ տրամաչափի խողովակներից, կոյուղին՝ 160մմ տրամագծի պոլիվինիլիորիդե (PVC) խողովակներից:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի խմելու-տնտեսական և հակահրդեհային կարիքների համար համակարգի միացման տեղում նախատեսվում է հոր' մեկը հակահրդեհային հիդրանտով, իսկ մյուսը ջրաչափական հանգույցով՝ d=50մմ ջրաչափով, շրջանցող d=100 մմ գծով:

Շրջանցող գիծը կապարակնքվում է և օգտագործվում է միայն հրդեհի ժամանակ: Տարածքի հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է 15/Վրկ ջրի ծախս:

Տանիքի մթնոլորտային ջրերի և պատահական հոսքերի հեռացումը կատարվում է դեպի բակային ցանց, որտեղից էլ տարածքից մոտ 30մ հեռավորությամբ հոսող գետակ:

Հեղեղատար խողովակները նախատեսված է իրականացնել d=200÷250մմ տրամագծի պոլիվինիլիորիդե (PVC) խողովակներից:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքներում կիրականացվեն բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: Էլեմենտներնի ընտրությունը կկատարվի հաշվի առնելով համալիրի նախագծի առանձնահատկությունները և տարածաշրջանի բուսականությունը, մասնավորապես՝ թխկի կարմիր՝ 56 հատ, կատալպա՝ 37 հատ, ծիակասկ՝ 12 հատ, գնդաձեվ ակացիա՝ 80 հատ, հուդայածառ՝ 18 հատ, բարբարիս՝ 30 հատ, գնդաձեվ իլենի՝ 115 հատ, սյունաձեվ թույա՝ 75 հատ, սիզամարգ՝ 7000 մ², գնդաձեվ սամշիտ՝ 35 հատ, փոփող գիհի՝ 25 հատ, սամշիտ՝ 440 մ

Բարեկարգման և կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են Ծաղկաձորի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը՝ տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ, 70x116x3/1000 = 24.36տ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր և 130մ³ (40մ³ մասնաշենքերց (A, B, C) և ուրեմն երկիրկանի տիպային քոթեզներից, յուրաքանչյուրից 9x10=90մ³) շինարարական աղբը: Շինհրապարակում շինարքի կուտակումների կիրականացվեն հատուկ նախատեսված վայրում, անջրթափանց հարթակով և ծածկի տակ: Շինարարական աղբը բարձվելու է ինքնաթափերի վրա և ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Հանգստի տնակների շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Բուսահողի հզորությունը կազմում 0.3÷0.5մ, որը տարածված է ամենուր: Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 5500մ³: Հանգող բուսահողը կպահեստավորվի ծածկի տակ և շինաշխատանքների ավարտից հետո կօգտագործվի տարածքի բարեկարգման և կանաչապատման համար:

Շինարարության տևողությունը կազմում է 36 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից, որից 6 ամիսը նախատեսված է նախապատրաստական և քանդման աշխատանքների համար:

Ենելով անվտանգության տեխնիկայի կանոններից շինարարության տարածքը պետք է սահմանագատել: Շին. տարածքում նախատեսված է ժամանակավոր թափոնակում, որն ունի կուտակվող գրունտը հետագայում կօգտագործվի հետլիցքի համար: Շինարարության ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման



կազմակերպվելու է բացառապես բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր տարածքի սահմաններում:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շին. հրապարակում նախատեսվում է տեղադրել կոնտերյների տիպի հատուկ շինություններ՝ աշխատելի սենյակ, հանդերձարան, պահակատնակ, բուֆետ, ինչպես նաև բիոզուզարաններ և փակ պահեստ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:

- Առանձին ամրանային ծողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կրերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով,

- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել մեքենայացման բազայում:

Համալիրի շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավագ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողության իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելու պետք է ղեկավարվել հակահրեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով և կոմպլեկտավորվում է հակահրեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտանետումներից:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Հետիոտների անվտանգությունը ապահովվելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով, լուսավորել տարածքը, տեղադրել պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ:



Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրացանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
 - ջրացանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
 - շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով,
 - սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
 - շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
 - աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
 - կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Շաղկաձորի համայնքապետարանի համաձայնեցմանը,
 - նախատեսվող նոր կանաչապատվող տարածքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի << գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Շաղկաձորի համայնքապետարանի համաձայնեցմանը,
 - կանաչապատ տարածքների ոռոգումը նախատեսված է իրականացնել կաթիլային ոռոգման համակարգի միջոցով, որի համար անհրաժեշտ անհրաժեշտ ջուրը կմատակարարվի ավտոցիստերնով պայմանագրային հիմունքներով,
 - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
 - շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
 - պարերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորումներ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համայիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

2. Օգտագործված մեքենայական յուղերով ու քայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

3. Աղմուկի, թրթոռամների և տատանումների մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

4. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուտուրայի, կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն << 2020թ. հունիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:



Բնապահպանական միջոցառումների համար ամբողջ շինարարաության ընթացքում նախատեսվում է հատկացնել՝ 1.620 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի, Ծաղկաձոր քաղաքի համայնքապետարանում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», Կոտայքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որինք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կըրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կյինեն թույլատրելի նորմայի սահմաններում։ Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ։

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՆ Լ-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
 2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
 - պարսպապատել շինարարական հրապարակը,
 - շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
 - շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվաղողերը լվանալ,
 - բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
 3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարրեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ծաղկաձորի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
 4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգում:
 5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պյաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացուցերը:



6. Համաձայն << կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերի՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համայիրի կառուցման նախագիծը ենթակա է պետական համայիր փորձաքննության:

7. << կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմսին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Կոտայքի մարզի, Ծաղկաձոր քաղաքի Վ. Հարությունյան փողոց, 2/10 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համայիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Վ. Վարդանյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղական
հ. Մարտիրոսյան

Ընդամենը՝ 7 էջ

